



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. երկրորդ կիսամյակում /վերլուծություն/

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 52392 գործարքներ, որոնց քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 14,0%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 24,0 %-ով:

2004թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 21732 օտարման գործարքների 89,8%-ը կազմել են առուվաճառքները, 9.6%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42,5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 42,7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. երկրորդ կիսամյակում, 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 14,0 %-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 17,7%-ով: 2004թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7933 առուվաճառքի գործարքների 63,7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13,7%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 6,4%-ով:

2004թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. երկրորդ կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		երկրորդ կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2004թ.
Կենտրոն	350.0-970.0	400.4	485.0	438.8
Արաբկիր	250.0-560.0	299.7	385.7	341.2
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	188.0	235.5	211.1
Նոր-Նորք	115.0-250.0	146.3	205.6	175.4
Ավան	120.0-230.0	145.7	196.8	166.5
Էրեբունի	120.0-300.0	157.3	189.1	172.6
Շենգավիթ	120.0-270.0	157.2	225.2	189.4
Դավթաշեն	130.0-320.0	186.6	241.8	211.4
Աջափնյակ	120.0-300.0	163.5	221.2	189.2
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	153.6	219.5	187.7
Նուբարաշեն	75.0-120.0	69.2	87.2	74.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	75.0-970.0	188.0	244.8	214.3

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. երկրորդ կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 14,2%, իսկ տարեկան աճը՝ 30,2%:

2004թ. երկրորդ կիսամյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում, իսկ առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան՝ նվազման միտում:

2004թ. երկրորդ կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2800 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ ավելացել է 1 գործարքով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 2,3%-ով:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. երկրորդ կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			երկրորդ կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-95.0	62.7	69.1	63.2
	Ապարան	20.0-50.0	27.3	37.6	29.8
	Թալին	20.0-50.0	25.2	32.0	28.1
Արարատ	Արտաշատ	40.0-88.0	54.6	58.0	55.5
	Մասիս	40.0-90.0	54.4	62.7	56.9
	Վեդի	30.0-60.0	31.7	42.7	35.6
	Արարատ	30.0-60.0	31.5	41.5	34.3
Արմավիր	Վաղարշապատ	50.0-130.0	84.5	103.6	86.2
	Արմավիր	40.0-80.0	45.6	64.5	48.5
	Մեծամոր	20.0-50.0	30.9	32.7	31.6
Գեղարքունիք	Սևան	20.0-55.0	30.6	35.3	31.9
	Գավառ	20.0-50.0	30.4	33.7	31.9
	Մարտունի	20.0-60.0	29.6	36.2	31.3
	Վարդենիս	10.0-35.0	17.3	17.6	17.3
	Ճամբարակ	13.0-30.0	16.8	17.9	17.8
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	61.3	64.0	62.2
	Ստեփանավան	20.0-55.0	33.3	36.7	34.0
	Մայիտակ	30.0-70.0	24.0	41.7	29.5
	Ալավերդի	15.0-40.0	25.5	26.4	25.7
	Տաշիր	15.0-45.0	19.4	25.5	21.3
Կոտայք	Արուսյան	45.0-150.0	84.1	103.9	86.2
	Նոր Հաճն	50.0-110.0	52.2	72.9	55.9
	Բյուրեղավան	30.0-90.0	35.2	47.6	36.5
	Եղվարդ	35.0-80.0	40.6	52.6	42.7
	Հրազդան	30.0-85.0	30.9	44.3	33.8
	Ծաղկաձոր	40.0-130.0	75.8	88.8	76.6
	Չարենցավան	30.0-85.0	31.1	42.2	33.7
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	71.8	76.2	72.2
	Արթինկ	20.0-45.0	25.3	31.4	27.1
	Մարայիկ	18.0-45.0	23.7	28.4	25.3
Սյունիք	Գորիս	25.0-70.0	29.7	38.4	32.0
	Կապան	20.0-60.0	29.3	34.2	31.3
	Սիսիան	20.0-60.0	27.6	36.2	30.2
	Մեղրի	18.0-58.0	25.2	25.7	25.3
	Ագարակ	18.0-50.0	23.3	25.2	25.1
	Քաջարան	13.0-40.0	18.5	19.9	18.7
Վայոց Ձոր	Վայք	30.0-70.0	35.3	40.5	35.3
	Եղեգնաձոր	40.0-90.0	46.9	52.7	47.0
	Ջերմուկ	40.0-100.0	41.2	55.9	41.1
Տավուշ	Դիլիջան	30.0-70.0	36.2	44.2	36.7

	Իջևան	40.0-90.0	40.4	54.7	42.3
	Բերդ	25.0-60.0	29.3	34.1	29.5
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.0

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների կիսամյակային աճը կազմել է 16,2%, իսկ տարեկան աճը՝ 21,0%:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում, իսկ առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան՝ նվազման միտում:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2691 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 663, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2028: 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 8,5%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 14,5 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 14,1 %-ով: 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1,5 %-ով, ընդ որում Երևանում նվազել է 0,5 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 2,1 %-ով:

2004թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. երկրորդ կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		երկրորդ կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2004թ.
Կենտրոն	255.0-1000.0	411.3	488.6	452.8
Արաբկիր	205.0-900.0	303.4	393.5	346.8
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	190.1	236.7	212.9
Նորք-Մարաշ	120.0-550.0	304.6	343.5	326.4
Ավան	125.0-280.0	145.9	198.6	168.9
Էրեբունի	130.0-320.0	157.3	192.0	174.7
Շենգավիթ	120.0-350.0	158.1	226.8	190.3
Դավթաշեն	140.0-700.0	186.8	243.6	212.5
Աջափնյակ	125.0-320.0	163.1	223.2	191.1
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	153.9	221.6	189.2
Նուբարաշեն	65.0-150.0	72.3	88.5	75.4
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-1000.0	204.2	259.7	231.0

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 12,4%, իսկ տարեկան աճը՝ 27.2%:

2004թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. երկրորդ կիսամյակում/ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			երկրորդ կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.8	86.7	83.5
	Ապարան	25.0-60.0	38.8	39.2	38.9
	Թալին	20.0-65.0	28.1	34.5	29.8
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.8	62.2	62.0
	Մասիս	50.0-90.0	62.4	64.4	62.8
	Վեդի	25.0-70.0	36.3	48.4	38.2
	Արարատ	20.0-65.0	37.4	44.3	38.0
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.6	105.5	90.1
	Արմավիր	35.0-90.0	52.3	65.7	53.1
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	40.2	36.4
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	39.7	34.5
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.6	21.3
	Ճամբարակ	15.0-50.0	19.4	21.4	20.0
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.7	70.4	69.4
	Ստեփանավան	15.0-60.0	33.6	44.5	34.5
	Սյիտակ	20.0-60.0	24.1	44.6	30.2
	Ալավերդի	15.0-50.0	25.9	28.5	26.1
	Տաշիր	15.0-55.0	19.9	27.2	21.9
Կոտայք	Աբովյան	70.0-130.0	92.4	106.1	92.9
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	74.3	56.7
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	48.5	38.5
	Եղվարդ	40.0-80.0	47.3	54.0	47.5
	Հրազդան	25.0-65.0	40.0	45.8	40.4
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.2	95.3	86.0
	Չարենցավան	25.0-65.0	33.4	43.1	34.9
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.8	91.8	91.3
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.2	28.9
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.6	25.6
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.6	40.1	33.3
	Կապան	20.0-60.0	31.1	35.9	32.4
	Միսիան	20.0-60.0	28.7	37.5	31.0
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.5	28.2
	Ագարակ	15.0-50.0	25.7	28.3	27.4
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	41.8	37.0

	Եղեգնաձոր	35.0-80.0	49.2	53.4	49.3
	Ջերմուկ	25.0-65.0	43.3	44.3	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	51.5	39.4
	Իջևան	35.0-80.0	41.2	55.9	42.9
	Բերդ	20.0-60.0	30.9	34.7	31.0
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.0	30.8

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 13,0%, իսկ տարեկան աճը՝ 15,3%:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

Ընդհանուր առմամբ, 2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 13102,11 հա /այդ թվում 212,12 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 12662,45 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 12976,52 հա հողերի /այդ թվում 207,51 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 12549,80 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 23 միավոր /12,70 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 9-ը՝ /7,31հա/ Երևանում:

Օտարված 107,43 հա /այդ թվում 1,43 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 98,41 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: 18,16 հա /այդ թվում 3,17 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ, որից 14,17 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 10090,49 հա, որից 10064,56 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2004թ. երկրորդ կիսամյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի				բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	390	66.97	162	54.81	0	0.00	451	54.76	162	23.47
Արագածոտն	25	223.39	1	0.14	7	0.20	249	229.98	174	20.79	5	0.82
Արարատ	294	993.85	461	49.40	6	2.34	539	232.57	309	26.51	0	0.00
Արմավիր	422	5257.86	58	7.39	2	0.04	756	4806.70	192	18.45	0	0.00
Գեղարքունիք	3	1.12	6	1.46	1	0.65	41	49.79	14	1.66	2	0.47
Լոռի	0	0.00	1	0.03	1	0.005	64	52.17	19	2.28	8	0.31
Կոտայք	95	177.47	1	0.08	0	0.00	634	245.33	704	71.05	1	0.27
Շիրակ	7	11.43	7	0.40	10	1.88	73	83.48	34	2.11	5	0.18
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	102	128.74	6	0.90	0	0.00
Վայոց Ձոր	9	23.10	0	0.00	6	0.32	25	13.53	15	0.90	5	0.28
Տավուշ	0	0.00	3	0.17	4	0.41	30	19.32	13	1.00	2	0.72

Ընդամենը	855	6688.2 2	928	126.0 4	199	60.66	2513	5861.6 1	1931	200.41	190	26.52
----------	-----	-------------	-----	------------	-----	-------	------	-------------	------	--------	-----	-------

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են 6643 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2003թ երկրորդ կիսամյակում՝ 3555/, այդ թվում 3368-ը՝ գյուղատնտեսական նշանակության /1680/, 3251-ը՝ բնակավայրերի /1855/, 23-ը՝ արդյունաբերական օբյեկտների /20/ և 1-ը հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ:

2004թ. երկրորդ կիսամյակում հողերի առուվաճառքներից 1847-ը իրականացվել են աճուրդների միջոցով, /2003թ երկրորդ կիսամյակում՝ 476/, այդ թվում 441-ը՝ /81,55 հա/ Երևանում /145/, իսկ 1406-ը՝ /6648,34 հա/ մյուս մարզերում /331/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 844 միավորը /6581,59 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2003թ երկրորդ կիսամյակում՝ 71/, 889-ը՝ /120,76 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /380/, 107-ը՝ /24,70 հա/ հասարակական կառուցապատման /22/, 7-ը՝ /2,84 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/ հողեր:

2004թ. երկրորդ կիսամյակում Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարքներ:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրված 3368 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների գործարքներից 844-ն իրականացվել են աճուրդների, 16-ը դատարանի վճռով և 11-ը ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	24	143.39	50.0	760.0	155.0	196	74.56	800.0	10000.0	2950.0
Ապարան						13	5.07	200.0	1700.0	575.0
Թալին						27	108.24	200.0	1680.0	465.0
Ծաղկահովիտ						12	36.77	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	135	258.92	35.0	7645.0	1255.0	175	50.84	740.0	12000.0	2170.0
Մասիս	52	173.74	55.0	97795.0	2585.0	136	61.97	400.0	8800.0	1670.0
Վեդի	107	561.19	35.0	5350.0	1920.0	224	116.94	450.0	7200.0	1360.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	59	197.30	45.0	5250.0	1955.0	345	665.04	650.0	4650.0	1370.0
Բաղրամյան	99	4704.72	45.0	2310.0	470.0	138	3732.06	200.0	1500.0	575.0
Վաղարշապատ	262	350.74	40.0	26160.0	1455.0	271	409.13	980.0	14000.0	2215.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	0.99	435.0	445.0	440.0	7	1.19	420.0	1100.0	640.0
Ճամբարակ						6	3.74	100.0	500.0	200.0
Մարտունի						2	0.19	100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0

Վարդենիս						26	44.67	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Ալավերդի						28	15.18	360.0	5500.0	910.0
Գուգարք						3	1.02	500.0	6000.0	1785.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						25	18.80	180.0	4000.0	470.0
Տաշիր						8	17.16	100.0	400.0	250.0
Կոտայքի մարզ										
Արմավան	19	33.74	85.0	935.0	490.0	385	92.64	600.0	20000.0	5090.0
Եղվարդ	20	98.30	110.0	3290.0	640.0	213	121.05	380.0	10000.0	3465.0
Հրազդան	51	37.23	20.0	4090.0	460.0	30	29.35	250.0	6000.0	970.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						38	31.51	550.0	2500.0	730.0
Ամասիա						6	12.70	80.0	525.0	180.0
Անի	1	5.00	400.0	400.0	400.0	18	25.11	240.0	800.0	300.0
Աշոցք						3	5.41	60.0	210.0	150.0
Արթիկ	6	6.43	270.0	865.0	450.0	5	5.55	140.0	800.0	295.0
Սյունիքի մարզ										
Գորիս						34	52.65	200.0	1600.0	510.0
Կապան						32	24.16	120.0	2000.0	330.0
Մեղրի						3	0.85	400.0	4240.0	850.0
Սիսիան						33	51.08	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	9.90	105.0	205.0	180.0	18	11.04	260.0	4000.0	2270.0
Վայք						7	2.49	120.0	3400.0	915.0
Տավուշի մարզ										
Բերդ						6	1.91	100.0	2000.0	655.0
Իջևան						4	4.02	530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						20	13.38	100.0	8340.0	640.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման 2018 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ, որից 533 աճուրդային վաճառքներ, 9-ը դատարանի վճռով և 34-ը ուղղակի վաճառքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						163	189088.0	250.0	8000.0	3100.0
Ապարան						5	11470.0	250.0	1400.0	340.0
Թալին	1	1400.0	90.0	90.0	90.0	5	6710.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	209	220790.0	80.0	1770.0	450.0	61	63912.0	300.0	6000.0	990.0

Մապիս	42	39125.0	255.0	770.0	420.0	183	136921.0	300.0	20000.0	1230.0
Վեղի	210	234131.0	85.0	1270.0	370.0	64	62969.2	250.0	2200.0	740.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	25	27000.0	515.0	2100.0	590.0	48	43662.0	300.0	5000.0	1125.0
Բաղրամյան						6	8040.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ	33	46900.0	200.0	755.0	405.0	138	132815.0	300.0	10000.0	1750.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	2209.0	300.0	2000.0	600.0
Ճամբարակ						3	2117.0	100.0	300.0	150.0
Մարտունի						6	5514.3	200.0	600.0	250.0
Սևան	5	14400.0	225.0	235.0	230.0	2	3800.0	200.0	2000.0	260.0
Վարդենիս						1	2952.0	100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						10	9956.5	150.0	5200.0	800.0
Սյիտակ						4	5410.0	140.0	900.0	180.0
Ստեփանավան	1	300.0	100.0	100.0	100.0	4	4320.0	100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	800.0	620.0	620.0	620.0	285	269123.0	300.0	10000.0	2125.0
Եղվարդ						386	399528.0	300.0	10000.0	2435.0
Հրազդան						32	41046.0	300.0	8000.0	1560.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						23	14509.2	250.0	3400.0	420.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի						1	1630.0	150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ	6	3960.0	150.0	1690.0	1185.0	8	4120.0	150.0	900.0	210.0
Սյունիքի մարզ										
Գորիս						4	6649.0	150.0	1200.0	400.0
Կապան						1	600.0	150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Միսիան						1	1710.0	150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	4580.0	150.0	2200.0	420.0
Վայք						7	757.6	170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						11	7789.0	150.0	2200.0	610.0
Նոյեմբերյան						2	2230.0	100.0	1400.0	210.0

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 71 գործարքներ 37,15 հա մակերեսով, ընդ որում 37-ը՝ Արարատի /9,04 հա/, 2-ը՝ Արմավիրի /1,52 հա/, 6-ը՝ Գեղարքունիքի /2,54 հա/, 6-ը՝ Շիրակի /6,49 հա/, 3-ը՝ Սյունիքի /1,43 հա/, 1-ը՝ Վայոց Ձորի /0,09 հա/ և 16 -ը՝ Տավուշի /16,03 հա/ մարզերում:

2004թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4670 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8,9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 26.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 4,9 %-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 34,7 %-ով:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 306 բնակարանների, 122 անհատական բնակելի

տների, 1103 հասարակական, 123 արտադրական նշանակության օբյեկտների, 2983 միավոր հողերի, 32 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ:

2004թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 348 վարձակալության գործարքների քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 58,9%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 38,6 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալվել են 13249,20 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 70,19 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 9916,73 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 790,66 հա նախկին պահուստային/, 78,17 հա բնակավայրերի, 184,90 հա արդյունաբերական օբյեկտների, 10,27 հա էներգետիկայի օբյեկտների, 2802,75 հա անտառային, 29,67 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 1,80 հա ջրային, 154,72 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Շիրակի մարզում՝ 3044,53 հա, որից 3028,65 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1599,00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	168	758.58
Արարատ	6	505.00	190	1373.39
Արմավիր	0	0.00	32	950.53
Գեղարքունիք	10	218.00	133	811.82
Լոռի	3	15.00	139	440.93
Կոտայք	1	2.00	243	463.50
Շիրակ	16	513.00	292	2515.65
Սյունիք	10	251.00	95	386.04
Վայոց Ձոր	0	0.00	175	576.10
Տավուշ	2	95.00	19	41.21
Ընդամենը	48	1599.00	1486	8317.75

2004թ. երկրորդ կիսամյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4198 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8,0 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 20,0 %-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 46,3 %-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 34,8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45,4%/, հասարակական նշանակության օբյեկտների /16,9%/, առանձնատների /15,2%/ և հողերի /17,3%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2123 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 23,9%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 54,5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1253,82 հա /այդ թվում 18,33 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 1230,05 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 507,09 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 95 և 33 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0,2%: 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 42,1%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 34,4%-ով: 2004թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 22,7 %:

2004թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2004թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 8818 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 15,2%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 39,8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16,8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /51,1%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳՎՊԿ լրատվական ծառայություն